

ՅՈՂԻԴ ԱՆԻՈՆԻ ԴԵՂԱԿԻՆԵՏԻԿԱՆ ՅՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ԶԵՏՈ

Աբրահամյան Զ.Գ., Զովհաննիսյան Ա.Ս.

«Արմենիկոլում» կլինիկական կենտրոն, Երևան, Զայաստան
«ՖԱՅՎԶԻ» ՍՊԸ, Երևան, Զայաստան

Տվյալ հետազոտության նպատակն է եղել համեմատել կոմպլեքս յոդ-դեքստրին պարունակող «Արմենիկոլում» պատրաստուկի (դեղապատիճներ) և «Յոդորալ» դեղահատերի դեղակինետիկական և կենսահամարժեքությունը:

Հետազոտությունը իրականացվել է 12 առողջ կամավորների կազմված երկսեռ խմբի հետ: Յոդիդ անիոնի կոնցենտրացիան արյան մեջ որոշվել է Thermo 720A MTR պոտենցիոմետրիկ սարքի միջոցով, որը համալրված է յոդ ընտրողական էլեկտրոդով:

Հաստատված է, որ դեղապատիճի ընդունումից հետո յոդիդ անիոնի կենսամատչելիությունը կազմում է $87,5 \pm 13\%$: Ընդ որում, տղամարդկանց մոտ այն կազմում է $90,6 \pm 15\%$, իսկ կանանց մոտ՝ $86,4 \pm 8\%$, և վիճակագրորեն չի տարբերվում: «Յոդորալ» դեղահատերի և «Արմենիկոլում» դեղապատիճների ընդունումից հետո, յոդիդ անիոնի դեղակինետիկայի համեմատական վերլուծության արդյունքում ապացուցվել է, որ յոդիդ անիոնի առավելագույն կոնցենտրացիան արյան մեջ «Յոդորալի» ընդունումից հետո ավելի բարձր է, քան «Արմենիկոլումի» ընդունումից հետո ($1,91 \pm 0,3$ մկգ/մլ և $0,778 \pm 0,53$ մկգ/մլ համապատասխանաբար): Այսպիսի օրինաչափությունն նկատվում է նաև դեղակինետիկական կորի մակերեսի համար, որն արյան մեջ արտացոլում է յոդիդ անիոնի ընդհանուր քանակը: Կտրուկ տարբերություն է նկատվում յոդիդ անիոնի բաշխման ծավալի համար, որը բնութագրում է յոդիդ անիոնի թափանցման աստիճանը՝ օրգաններ և հյուսվածքներ: Յոդիդ անիոնի բաշխման ծավալը «Արմենիկոլում»-ի ընդունումից հետո համարյա 3 անգամ ավելի մեծ է, քան «Յոդորալի» ընդունումից հետո (16,9լ և 5,4լ համապատասխանաբար):

Այսպիսով, ստացված դեղակինետիկական տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ «Արմենիկոլում» դեղապատիճներում առկա դեքստրինները նպաստում են յոդի ավելի լիարժեք ներթափանցմանը՝ ներբջջային տարածություններ: Վերջինս կարող է ենթադրության հիմք դառնալ, որ «Արմենիկոլում»-ը կարող է ավելի արդյունավետ բուժման միջոց հանդիսանալ այն օրգանների, (վահանաձև գեղձ, կաթնագեղձեր) հիվանդությունների բուժման համար, որոնք ինամակցվում են յոդի հետ, քան «Յոդորալը»: